

## ՎՐԹԱՆԵՍ ՔԵՐԹՈՂ

### ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ (գրաքար, աշխարհաքար)

Հայ կերպարվեստի պատմության վաղ շրջանի կարևորագույն բնագրերից է Վրթանես Քերթողի (նշանավոր վարդապետ, 604-607 թթ. Հայոց կաթողիկոսական տեղապահ) «ՅԱՂԱԳՍ ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՆԵՐ» գործը: Սիրարվի Տէր-Ներսեսյանն այն անվանում է «պատկերամարտների դեմ որևէ լեզվով գրված ամենահին գրությունը» (տե՛ս U. Տէր-Ներսեսյան, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 7): Բնույթով հակաճառություն լինելով, երկը նաև ուշագրավ տեղեկություններ է պարունակում վաղ միջնադարյան հայկական եկեղեցիների պատկերազարդման, որմնանկարներում տեղ գտած թեմաների, անգամ՝ ակներկի ձևով՝ հեթանոսական մեհյաններում եղած երբեմնի պատկերների մասին:

Ներկայացնում ենք գրաքարով և աշխարհաքարով:

## ՎՐԹԱՆԵՍ ՔԵՐԹՈՂ

### ՅԱՂԱԳՍ ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՆԵՐ

1 Ի կենսաբեր լուսոյն զարդարին ամենայն արարածք, եւ ի ճառագայթ նորա նորոգ պայծառացեալ քերկրին երկինք եւ երկիր, քանզի լոյսն ճշմարտութեան ելից լուսով զամենայն տիեզերս, փարատեաց զմէզ խաւարային ի ստուերամած եւ թանձրացեալ սրտից եւ լցաւ աշխարհ Աստուածածանաւթ վարդապետութեամբ: 2 Իսկ մթաւորական ուսմանն խորհաւոյք, որք շրջին յաղջամուղջ խաւար ընդվայրածք շաղեալք՝ սասանեն, զանհեթեթս պատրեն զմիտս անմեղաց եւ մուծանեն հերձուածս յեկեղեցի: 3 Ոչ է արժան, ասեն, նկարս եւ պատկերս յեկեղեցիս առնել. եւ քերեն վկայութիւն ի Հնոց կտակարանաց, զոր վասն հեթանոսաց կոսապաշտութեան էր ասացեալ, վասնորոյ եւ ամբաստան լինէին մարգարէքն: 4 Բայց մերս ոչ նմանի նոցա, որ յաղագս Քրիստոսի եւ ընտրելոց իւրոց: 5 Եւ ոչ եթէ ի բանից ճարտարութենէ, այլ Գրոց վկայութեամբ ասասցուք, որպէս եւ պատմիչը պատուիրանացն ուսուցին մեզ ստուգապէս :

6 Քանզի զպատկերացն աւրինակ նախ Սովուս արար ի խորանին հրամանաւն Աստուծոյ: 7 ք' քերովքէս ոսկիս, ճախարակեայս, թեւաւորս, մարդակերպս ի վերայ քաւութեանն, յորոյ միջոյ խաւսէր Տէրն տերանց, զոր եւ առաքեալ ի վկայութիւն հաստատէ՝ քերովքէքն փառաց, որք հովանի ունէին ի վերայ քաւութեանն, որ ի մեծի խորհրդոյ աւրինակ: 8 Նոյնպէս եւ զվարագոյքն, զոր Տէրն ասաց առնել նարաւոտվ, նկարուք ի պէսպէս յաւրինուածեալ զարդիք, որ է քեհեզ եւ ծիրանի, կարմիր եւ կապուտակ. ոչ ապաքէն դեղք էին երանգք նկարուց վարագուրին, եւ նկարք վարագուրին՝ քերաւոքէս: 9 Այնպէս եւ Սողոմոն արար ի Տաճարին քերովքէս ի կիպարիս փայտէ եւ պատեաց ոսկով եւ ոչ միայն որ ի դաբիրն էին քերաւոքէք այլ ի յորմսն եւ ի դրունս եւ ի սեամս քերաւոքէքն այլ եւ յորմսն. Չուրջանակի գրեաց գրչաւ քերաւոքէս եւ արմաւենիս եւ թոռուցեալ թիթեղունս, եւ ոչ խստեաց Աստուած այլ կոչեաց Տաճար անուան իւրոյ: 10 Եւ հոգեկիր մարգարէն

Եզեկիլը, տեսիլն զոր ետես, ոչ իբրեւ զայլ ոք ի մարգարէիցն եւ կամ պատզամախաւաւք, այլ աստուածատես զուշակմամբ բարբառեալ՝ ասէր. 11 Եղ զիս Տէր ի վերայ լերին միոյ՝ բարձոյ յոյժ, եւ ի վերայ նորա իբրեւ զշինուած քաղաքի, եւ տօրաւ զիս ի ներքս, եւ տեսի ի նմա Տաճար եւ այր մի ի նմա ահեղ եւ զարմանալի, եւ փայլատակունք հատանէին ի նմանէ իբրեւ ի պղնձոյ, եւ կայր ի վերայ դրանն եւ ի ձեռին իւրում ունէր լար շինողաց եւ ձաւղ չափոյ եւ ասէ ցիս. «Որդի մարդոյ տես եւ ի միտ առ զամենայն ինչ, որ ի սմա է, զի վասն ցուցանելոյ քեզ եկի այսր»: 12 Եւ տեսի զուածարն նկարեալ շուրջանակի ներքոյ եւ արտաքոյ քերովքէք եւ արմաւենիք ի յատակէն մինչեւ ցվերնայարկն, եւ ոչ միայն Տաճարն էր նկարեալ, այլև պատշզամբն, եւ դրունք եւ սեղանն Տեառն: 13 Եւ էին քերովքէքն մարդակերպք երկու երկու ամեներին եւ արմաւենի ի մեջ երկոցունց, որ է մեծի սքանչելեաց նորա ցոյց :

14 Արդ, զի՞նչ ասիցես յաղագս սորա, ով մարդ, որ հիւանդ ես մտաւք, զի վասն Մովսէսի եւ Սողոմոնի յաւրինուածոյն եւ քերաւրէիցն ասացեր, թէ ձեռագործք են, իսկ զա զի՞նչ համարիցես, զոր Աստուծոյ իւրոյ է ցուցեալ: 15 Ահա յայտ եղեւ, զի որ յատաջնոցն պատկերք էին, ի պատիւ եւ ի սպասաւորութիւն երկրպագութեան փառաց Աստուածութեան: 16 Այս ի Հնոց զրոց ասացեալ:

17 Իսկ ի Նորոց կտակարանաց ասէ Պաւոսն ցԱթենացիսն. 18 Շրջեալ եւ տեսեալ զպաշտամունս ձեր՝ զտի բազին մի, յորում զրեալ էր. «Անծանաւթի Աստուծոյ». զոր դուք յանձանաւթ պաշտէք, ես զնոյն պատմեմ ձեզ: 19 Մի՞թէ Աստուած էր բազինն. բայց զի յանուն Աստուծոյ պատուէին, զնոյն եւ Պաւոս վկայեաց: 20 Եւ մեր ոչ եթէ ձշմարիտ Աստուած ասեմք զպատկերս եւ զնկարս, այլ յանուն Աստուծոյ նկարեմք որպէս երեւեցաւն, զոր Եսայի ասէ զծնանելն, Երեմիա՝ զընդ մարդկան շրջելն, եւ Դասիթ՝ զշարչարանացն եւ զթաղման, եւ Եզեկիլ եւ Ովսէէ՝ զՅարութենէն, Դանիէլ եւ Զաքարիա՝ զերկրորդ զալստենէն, Նաւում եւ Մաղաքիա՝ զդատաստանէն, քանզի նոքա նշանակաւ պատմեցին մեզ եւ է որ եղեւ եւ է որ լինելոց է, եւ մեք զնոյն նկարեմք, զոր ի Գիրսն զրեալ է, զի եւ զիրն դեղ է եւ նիւթք պատկերաց: 21 Նաեւ վարդապետք եկեղեցւոյ յիշատակեն յաղագս պատկերաց, որպէս Յոհաննուպոլսի Եպիսկոպոս յայն ձառի, որ ասէ առ լուսաւորեալսն, մի փոքր յառաջ մատուցեալ ասէ.

«Զորաւրինակ պատկերք պղնձիք թագաւորականք անշունչք են եւ անզգայք, որ փախչին ի նոսա մարդիկ ապրեցուցանեն ոչ զի պղինձն է, այլ վասն զի թագաւորաց է»: 22 Եւ դու ըստ այնմ աւրինակի իմացիր, ով հերետիկոսդ: 23 Եւ դարձեալ յայն ձառի, որ ասէ. «Ոչ է պարտ անցանել զաստուածային զրով. ապա, ասէ, ոչ տեսանեք ի թագաւորական պատկերսն, զի ի վեր անդ կայ պատկերն եւ ըզթագաւորին զիր ունի զրեալ եւ ի խոնարի խարսխին զրեալ են թագաւորին նահատակութիւնք, յաղթութիւնք, իրաց ուղղութիւնք. նոյնպէս եւ ի մաշկսն է տեսանել թագաւորական պատկերն ի վերայ եւ ի ստորեւն առաքինութիւնք, յաղթութիւնքն ամենայն»:

24 Կամ զի՞նչ արդեաւք ասիցես զպատկերն Տեառն, զոր Անան՝ հաւատարիմ թագաւորին Աբգարու, նկարեաց յանդիման Քրիստոսի, տեսութեամբ իսկ. զոր եւ այժմ ասեն զոլ ի մեծ եկեղեցւոցն Ուոհայի:

25 Եւ Սեւերիանոս Եպիսկոպոս ասէ. «Զորաւրինակ թագաւորի ի բացեայ երելոյ պատկերն նորա լնու զտեղի թագաւորին, եւ երկրպագանեն իշխանք եւ զտաւնս ամսոյ կատարեն. պէտք հանդիպին եւ ռամիկք երկիրպագանեն ոչ ի տախտակն հայելով, այլ ի պատկեր թագաւորին, ոչ ի բնութիւն հային, այլ որ ի զրովն տպաւորեալ է. եւ եթէ մահկանացու թագաւորի պատկեր այնքան զարանայ, որչափ եւս առաւել անմահի թագաւորին կերպարան եւ պատկերն»: 26 Այդպէս իմա զոր ասենս, զի եւ սոքա վարդապետք էին եկեղեցւոյ, եւ թէ զացա զիրս կամիս ուսանել՝ զնոյն

պատմեն: 27 Այսպէս եւ սուրբն Գրիգոր Հայոց Լուսաւորիչն ասէ յաղալքսն իւրում. « Փոխանակ դրաւշելոցն փայտից զԽաչն իւր կանզնեաց ի մէջ տիեզերաց, եւ զի սովոր էին մարդիկ երկրպագանել պատկերացն մեռելոց, եղաւ ինքն մեռեալ պատկեր ի վերայ Խաչին, մեռաւ եւ անշնչացաւ, զի հաստատեսցեն խաչին փայտի երկրպագանել եւ որ ի վերայ նորա պատկերն եւ մարդադէմն իցէ, զի զպատկերագործսն եւ զպատկերասէրսն եւ զպատկերապաշտսն յիւր պատկեր աստուածութեանն հնազանդեցուացէ»: 28 Արդ եթէ մերոց քանից ոչ հաւատայք, զգիրս պարտ է քննել եւ ի վերայ հասանել. բայց դուք ի զրոց այնչափ հեռի եք, որպէս երկինք՝ յերկրէ:

29 Բազում եւ այլ վկայութիւնք են ի Գրոց Սրբոց, քանզի ամենայն ինչ տեսանելի է, որ միտս ունին, զի ականջը լսեն, եւ միտք իմանան, եւ առանց մտաց աչաց մարմնոյ աչք կուրացեալ գտանին: 30 Բայց զարմանք մի այս է, որ զպատգամսն ընդունիք եւ զիշխանն հալածէք, նշանին երկրպագանէք եւ ի թագաւորն քարածիզ լինիք, զիսչն պատուէք եւ զխաչելեալն թշնամանէք: 31 Այսպէս Մանկքեցիքն եւ Մարկիոնացիքն առ աչաւք համարին զՃշմարտութեամբ մարմնանալ Փրկչին, եւ յորժամ տեսանեն զպատկերս՝ զժոմնին զայրագնեալք եւ մատուցեալք թշնամանեն: 32 Զի թէ մեր չիցէ տեսեալ զմարգարէսն, տեսեալ է եւ քննեալ, զի նոքա վասն կոռապաշտութեանն աղաղակէին ըստ այնմ, թէ կուրք հեթանոսաց դեւք են \*, բայց ոչ ուրեք գտանեմք զրեալ, եթէ պատկերք եկեղեցւոյ կամ քրիստոնէից ասեն դեւք, այլ զկոռցն ամբաստան լինին մարգարէքն: 33 Նաեւ յեկեղեցական պատմութեանն ասէ, զոր Եւսեփի ժամանակազրի հաստատեալ էի եաւթերորդ դպրութեանն ի եաւթն եւ տասներորդ ձառին, վասն սքանչելի նշանացն, որ եղեն, ասէ, ի Պեննադայ ի քաղաքի մեծամեծ գործոցն վասն Փրկչին մերոյ: 34 «Այլ քանզի զայս քաղաք յիշեցաք մեք, ասէ, ոչ է արժան անցանել զսրա պատմութեամբ, զի արժանի է սա յիշատակաց այնոցիկ, որ զայցեն զկնի մեր վասն կնոշն տեռատեսի, որոյ բղխումն արեան խաղացեալ ելանէք, զոր ուսաք մեք ի սուրբ Աւետարանէն, որ բժշկեցաւ ի ցաւոց անտի ի Փրկչէն մերմէ յայնմ քաղաքի, որ ասեն, թէ էր նա, եւ տուն նորա յայտնի է անդէն ի քաղաքին եւ շնորհք ողորմութեանն, որ եղեն ի կինն՝ նշան սքանչելեացն Աստուծոյ, զի առաջի դրաց տանն նորա կայ ի վերայ բարձր վիմի պատկեր պղնձի կնոշ մարդոյ իշեալ ի ծունզու իւր եւ սփունալ զձեռու իւր առաջի իւր՝ աղաչք ըստ նորա նմանութեան, եւ ընդդէմ նորուն կայ դարձեալ պատկեր պղնձի առն մարդոյ, որ կանզնեալ է եւ կայ արկեալ զիւրեւ մեկնոց եւ կարկառեալ ունի զձեռու իւր առ կինն, եւ ի կողմանէ ոտից նորա ի վերոյ քան զիանդերձն բուսեալ է արմատ ինչ բոյս, որ աւտար է յամենայն արմատոց տեսլեամբ իւրով եւ ելանէ մինչեւ ի դրաւշակ հանդերձի նորա եւ է նա դեղ ամենայն ցաւոց, այս անդիքի ի նմանութիւն Փրկչին մերոյ է, որպէս եւ ասեն՝ կայ մնայ մինչեւ յաւուր մեք, եւ տեսաք մեք զնա աշաւք մերովք ի ժամանակի իբրեւ չզգաք մեք ի քաղաքն յայն»: 35 Բայց ոչինչ է սա մեծ քան զայն, որ հաւատացին ի Քրիստոս յարանց հեթանոսաց եւ նկարեցին դեղով զպատկերսն Պաւոսի եւ Պետրոսի եւ զնորուն իսկ զՔրիստոսի եւ կայ մինչեւ ցայսաւր ժամանակի:

36 Եւ արդ, չիցէ ձեր տեսեալ զգիրս զայս, ով ընկեր, որ հակառակ կայք պատուիրանացն Աստուծոյ: 37 Ընկեր ասեմ, ոչ վասն ուղղափառութեան հաւատոյ ասեմ ընկեր, այլ ըստ այնմ, որ լուաւն ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, թէ՝ Ընկեր, վասն որոյ Եկիրդ : 38 Զի թէ ընթերցեալ էք եւ ոչ զիստք, ապա առ ձեզ կատարի բան առաքելոյն, որ ասէ. 39 Որոց Աստուած աշխարհիս այսորիկ կուրացոյց զմիտս անհաւատիցն, զի մի՛ ծագեսից ի նոսա լուսաւորութիւն Աւետարանի փառացն Քրիստոսի. այլովք հանդերձ. ապա թէ չէ ընթերցեալ ձեր, խնդրել արժան է եւ քննել զբարին եւ զշարն եւ ընտրել զաստուածայինսն եւ զդիւականսն:

40 Եւ զիարդ ոչ գիտէք, զի ի մեհեանս կրոցն է դրոշմեալ Որմիզդ, որ է Արամազդ, եւ պոռնկութիւնք իւր եւ կախարդութիւնք, իսկ յեկեղեցիս Աստուծոյ տեսանեմք նկարեալ զսուրք Կոյս Աստուածածին եւ ի գիրկս իւր ունելով գՔրիստոս իբրև յայնժամ զարարիչն իւր եւ զՈրդի եւ զստեղծիչն ամենայնի: 41 Իսկ մեհեանս կրոցն Անահիտ եւ պղծութիւնք իւր եւ պատիքը: 42 Իսկ յեկեղեցիս քրիստոնէից եւ ի յարկս վկայից Աստուծոյ տեսանեմք նկարեալ զսուրքն Գրիգոր եւ աստուածահածոյ չարչարանք իւր եւ սուրբ առաքինութիւնք եւ զսուրքն Ստեփաննոս Նախավկայն ի մեջ քարկոծողացն, զերանելի եւ զսուրք կանայսն զԳայիանէ եւ զՀռիփսիմէ՝ հանդերձ ամենայն սուրբ ընկերաւք եւ յաղթող նահատակութեամբ նոյնպէս, եւ զայլ առաքինիս եւ զպատուականս եւ զիրեշտակալրաւնս, զորս ոչ բաւեմք ընդ համար արկանել: 43 Ի մեհեանս սնուտիցն Աստոիկ եւ Ափրոդիտէս, զոր մայր ցանկութեանց կոչեն ամենայն հեթանոսը, եւ արբեցութիւնք նոցա եւ անառակութիւնք, իսկ յեկեղեցիս Աստուծոյ՝ Խաչն տերունական եւ խաչակիր գունդք առաքելոց եւ մարզարէից, որբ բարձին ի միջոյ զկոռապաշտութիւն ամենեցուն եւ ածին զտիեզերս յաստուածպաշտութիւն եւ յամաւք արարին զստանայ եւ զզաւրս նորա:

44 Քանզի յեկեղեցիս Աստուծոյ տեսանեմք նկարեալ զամենայն սքանչելագործութիւնս Քրիստոսի, զոր արար, որպէս եւ ի Գիրս գրեալ է, որպէս եւ յառաջն ասացաք, զոր գուշակեցին մեզ մարզարէքն. զծնանելն ասեմ եւ զմկրտելն, զշարչարանսն, զխաչելութիւնն, զթաղումն, զյարութիւն, զիամբառնալ յերկինս. զայդ ամենայն նկարեն յեկեղեցիս, զոր Գիրք Սուրբք պատմեն, Ոչ ապարէն դեղով գրեալ է զզիրս եւ զնոյն բան դեղովք նկարեալ է յեկեղեցիս. ի զրոցն ականջք միայն լսեն, իսկ զնկարսն աշաւք տեսանեն եւ ականջաւք լսեն եւ սրտիւք հաւատան:

45 Ահա յայտ է, զի չէ արտաքոյ Գրոց պաշտել զպատկերսն, եւ եթէ խորհրդիւ ոք քննէ, ճշմարիտ զայ, եւ վրիպեալ զտանին հերետիկոսքն, որ հակառակաբանեն եւ ասեն. «Վասն այսորիկ խոտան համարիմք, զի անխաւք են եւ անբանք»:

46 Արդ, մի՞թէ Տապանակն Աստուծոյ խաւսէր, յորժամ զԴագովն քերանսեալ կործանեաց եւ զԱզովտոս եւ զԳէթ եւ զԱսկողովնա զքաղաք այլազգեացն եհար հարուածովք, մինչեւ բողոք բարձեալ ասկողովնացիրն ասէին. 47 Ընդէ՞ր դարձաւ տապանակն Աստուծոյ իսրայէլի առ մեզ սպանանել զմեզ եւ զժողովուրդս մեր : 48 Մի՞թէ Խաչն Քրիստոսի խաւսեցաւ, որ ի քաղաքին զմերեալսն կենդանացոյց եւ հրաշագործութիւնս բազումս է արարեալ մինչեւ յաւուրս մեր, որ է պարձանք հրեշտակաց եւ փրկութիւն մարդկան եւ արհաւիրք դիւաց: 49 Եւ արդ զուգաւորեալ շարամանին նոր պատուիրանք ըստ հնոցն եւ մեզ վկայեն շնորհիւն Քրիստոսի, քանզի եւ զտուփս Աւետարանին տեսանեմք նկարեալ, ոչ միայն յոսկոյ եւ յարձաթոյ այլ եւ յոսկերաց փղաց եւ կարմիր մորթոց կազմեալ եւ մեք յորժամ երկիրպազանեմք սրբոյ Աւետարանին կամ համբուրեմք, ոչ եթէ փղին ոսկերացն մատուցանեմք զերկրպազութիւն կամ լայքային, որ յաշխարհէ բարբարոսացն է եկեալ ի վաճառ, այլ Քանի Փրկչին, որ ի մազաղաթին գրեալ է: 50 Այսպէս եւ Տէրն Փառաց նստեալ ի յաւանակի եւ ի մերձենալ ի քաղաքն, ելին ընդ առաջ ծերք եւ տղայք ոստաւք ձիթենեաւք եւ ոստաւք արմաւենեաւք եւ աւրհնեին զովէին եւ երկիրպազանեին. ոչ եթէ իշոյն երկրպազանեին, այլ Քրիստոսի Որդույն Աստուծոյ, որ ի վերայ նորա նստեալն էր:

51 Այսպէս եւ պատկերացն երկրպազանել ոչ վասն դեղոցն է, այլ վասն Քրիստոսի, յորոյ անուն նկարեցաւն: 52 Այլ արդ զի՞նչ նմանութիւն է աստուածային պատկերացն հեթանոսաց պղծութեանն. վասն որոյ հերետիկոսք բիծս կարկատեն եւ հերձուածս մուծանեն ի կորուստ անձանց եւ բնաւ լսողաց, զոր տալոց եւ հատուցանելոց են զանանցական վրէժս տանջանաց զեհենին՝ հանդերձ ամենայն կամակցաւք իւրեանց եւ զործակցաւք, որում յիրաւի եւ ի դէպ ասաց

երջանիկ մարգարէն Ովսէէ. 53 Որոզայթ գայթակղութեան ի ճանապարհ նոցա, վասն զի մոլութիւն ի տան Աստուծոյ տնկեցին. եւ միւս եւս. 54 Վայ որ արբուցանէ ընկերին իւրում հրապոյրս պղտորս : 55 Եւ արդարեւ իսկ հրապուրանաւը եւ հաղթիւք մեղաց շաղապատին, որ ըստ երերեալ են յուղի հաւատոյ, եւ հեղեալ տապալեցան յուղի խորհրդոց: 56 Բայց ասեմ եւ ոչ լում: 57 Զոր աւրինակ եթէ զիրս ուրուք ինդրեալ յարկեղաց եւ ասիցէ զառաքեալդ տուր, կամ թէ զեսայի, կամ զԵրեմիա, մի՛ թէ Եսայի ինքն իցէ եւ կամ առաքեալն ինքնին, ոչ պաքէն պատզամք աստուածայինք ընդ նմին եւ բանք նոցա: 58 Եւ մեք պատկերաց նկարուք զնոսա յիշեմք եւ զառաքողսն նոցա եւ ոչ ասեմք, թէ սա իցէ Աստուածն, այլ յիշողութիւնն Աստուծոյ եւ ծառայից նորա:

59 Եւ որ գրեալն է, թէ զպատկերս յեկեղեցիս Պապ տարաւ, այդ ամենեցուն յայտնի է, թէ սուտ խաւսիք. քանզի ի Հայս պատկերս ոք չզիտէր առնել մինչեւ ցայժմ, բայց ի Հոռոմոց բերէին, եւ մեք ուսմունք անտի էին, եթէ նոքա չէին կորուսեալ. եւ քան զՊապ յառաջ այլ թագաւորք էին եւ պատկերս եւ նկարս տանէին յեկեղեցիս յանուն Քրիստոսի, եւ դարձեալ զկնի Պապայ եւ այլը թագաւորք եղեն ի Հայս եւ հայրապետք, որպէս երանելի սուրբն Սահակ եւ Մաշտոց եւ Եզնիկ եւ Արձան եւ Կորիւն եւ ընկերք նոցա, որ եւ ի ձեռն իսկ նոցա Հայոց դպրութիւն շնորհեցաւ ի Տեառնէ Աստուծոյ, եւ ոչ ոք ի նոցանէ վասն պատկերաց եւ նկարուց եկեղեցւոյ բանս ինչ ոք արար. բայց միայն Շմուէլ եւ Թաղէոս եւ Եսայի եւ ընկերք նոցա, որ եւ զյուրփս ընդ իւրեանս ի յետս կացուցին, որպէս եւ զձեզդ, զի թէպէտ առ ժամանակ փայլէ կողմն հերձուածողաց, այլ ստէպ իւամրի, վասնզի զստութիւն խաւսին. զի եւ մեղք իսկ առաջին ի ստութենէ ծնան, որպէս առ Աղամաւն: 60 Քանզի ոչ եթէ իմ են բանք, այլ Գրոց Սրբոց, Հնոց եւ Նորոց կտակարանաց. եթէ կամիք Քրիստոսի Աստուծոյ ծառայել եւ սիրել զպատութիւնս նորա, զնոյն զիրս, զորոց անուանս ի սմա գրեալ է, յուզեցէր եւ յորժամ զտանիցէր, նոքա ցուցանեն զՃՄարիտ ճանապարհն Աստուծոյ:

61 Եւ վասն պատկերացն այշափ եւեթ բաւական լիցի, որ միտս ունի:

62 Իսկ զդեղոցն, որ ասեն, թէ պիղծ են, որք յանդիմանին իսկ ի յինքեանց բերանոց, քանզի դեղ Գրոցն է արջասապ եւ զիստոր եւ կոփա, զոր եւ ճաշակել իսկ մարթի, եւ նիւթն պատկերաց կաթն ու ձու, զառիկ, լաժուարդ, ժանզառ, բուռ, կիր եւ որ այլ ինչ է, զոր ի պէտս կերակրոց մարթի ճաշակել կամ ի պէտս բժշկութեան: 63 Բայց ոչ ասեմք պիղծ, զոր եղ Աստուած ի վայելչութիւն երկրի, եւ ոչ անզոսնեմք իբրեւ զազիր ինչ, որ ասէք, թէ հոտ զայ ի դեղոցն: 64 Արդ իբրեւ այդպէս անադտք էք եւ հոգեւորք, պարտ է ձեզ ի ժամ աղաւթիցն հերձուլ զորովայնս ձեր եւ եռանդամք ջրով լուանալ զաղիս ձեր եւ ապա մտանել յեկեղեցի, ով չարք եւ անհնարին չարք, որ մերք դեղոցն ահոկ դնէք եւ մերք պատկերացն եւ նկարուց եւ ասէք, թէ ձեռագործք են եւ մեզ չեն արժանի, նա եւ եկեղեցիք ձեռագործք են եւ կոչին Տաճար Աստուծոյ: 65 Զոր եւ Պաւլոս ասէք առ Տիմոթէոս. Զի զիտացես, ասէ, որպէս պարտ իցէ քեզ ի տան Աստուծոյ շրջել որ է եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ սիւն եւ հաստատութիւն ՃՄարտութեան: 66 Արդ, առ այս զինչ ասիցէր, զի եւ սա ձեռագործ է, քանզի յայտնեաւք զաներեւոյթն ճանաչեմք, եւ դեղքն եւ նկարքն յիշողութիւնն է Աստուծոյ եւ ծառայից նորա: 67 Բայց քանզի դուք վիսացեալ էք սատանայի եւ սուրբ կոչք զանձիս եւ նմանող էք զերեզմանաց բուելոց, ապա ՃՄարիտ ասաց առակողն. Մի՛ կարի արդար լինիր եւ մի՛ ճարտարէր, զի մի՛ թիրեսցիս: 68 Եւ դարձեալ ասէ. Ծնունդ չար առ արդարս ունի զանձն իւր, որպէս եւ դուքդ բարձրացեալ պանծայք եւ անդուռն բերանով խաւսիք, զոր ինչ ոչ է պիտոյ:

69 Այլ մեք փութացուք յեկեղեցի Քրիստոսի մտանել ի տուէ եւ ի զիշերի հանապազաւք կանիւեալ յաղաւթս, որպէսզի կատարեսցուք զպանդիստութեան ժամանակս:

70 Եւ արժանի լիցուք տեսանել զԱստուած գուարթագին երեսաւք յաւուրն դատաստանի, զի յալիտենից բարութիւնս հասանել կարասցուք զի նմա փառք յալիտեանս յալիտենից, ամէն:

## ԲՆԱԳԻՐԸ պատրաստեց Երվանդ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ

Մատենագիրք Յայոց, Գ հատոր, Զ դար, Անթիլիաս, 2004:

## ՎՐԹԱՆԵՍ ՔԵՐՁՈՂ

### ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բոլոր արարածները զարդարվում են կենսաբեր լույսով, և նրա ճառագայթներով նորովի պայծառացած քերկրում են երկինք ու երկիր, որովհետև ճշմարտության լույսը լցուց լույսով ողջ տիեզերքը, փարատեց խավար մեզը մթամած և կարծրացած սրտերից և աշխարհը լցվեց աստվածածանոթ վարդապետությամբ: Իսկ մոլար ուսման հետևողները, որոնք շրջում են խավար աղջամուղում, մանվածապատ զրախտություններով ցնցում և անհեթեթությամբ խարում են անմեղների մտքերը, հերձված են մտցնում եկեղեցում: «Արժանի չէ, ասում են, նկարներ և պատկերներ դնել եկեղեցում»: Հին Կտակարանից վկայություն բերում են ինչ որ հեթանոսների կրապաշտության համար է ասված, որի դեմ և բողոքում էին մարգարեները: Բայց մեր (նկարները) նման չեն նրանց (նկարներին)<sup>1</sup>, որովհետև Քրիստոսի և նրա ընտրյալների համար են (արվում): Ոչ թե ճարտար խոսքերից վկայություն պիտի բերենք, այլ զրքերի վկայությամբ պիտի խոսենք, ինչպես ստուգապես սովորեցրին մեզ պատվիրանների մեկնողները:

Որովհետև նախ Մովսեսը պատկերների օրինակը շինեց խորանի վրա, Աստծու հրամանով, երկու ոսկյա, մարդակերպ, թևավոր ու ձախրող քերովքեներ<sup>2</sup> քավության (խորանի) վրա, որի միջից խոսում էր տերերի Տերը: Նույնը Առաքյալը վկայաբերելով հաստատում է. «Փառքի քերովքեները հովանի էին քավության վրա», որը մեծ խորհուրդի օրինակ էր: Նույնպես և վարագույրը, որ Տերը պատվիրեց պատրաստել նարոտով, նկարներով և զանազան ձեռագործ զարդերով<sup>3</sup>, քեհեզյա, ծիրանի, կարմիր և կապույտ: Դեղ չէի<sup>4</sup>ն արդյոք վարագույրի նկարների երանգները, իսկ նկարները՝ քորովքեներ: Այնպես արեց նաև Սողոմոնը տաճարում: Կիպարիս<sup>5</sup> փայտից քերովքեներ պատրաստեց և ոսկով պատեց: Բայց ոչ միայն դաբիրում<sup>6</sup> քերովքեներ կային, այլև պատերի վրա, դռներում և շեմքերին: Պատերի վրա զրիչով շուրջանակի գծեց քերովքեներ, արմավենիներ<sup>6</sup> և թոշող թերթիկներ, բայց Աստված չհանդիմանեց, այլ տաճարը Իր

<sup>1</sup> Բնագրում չկա նկարներ բառը:

<sup>2</sup> Աստծուն ուղեկցող հրեշտակներ:

<sup>3</sup> Ելից Ի. 31, Լ. 80 և 35:

<sup>4</sup> Նոճի:

<sup>5</sup> Սրբություն սրբոց վայր, խոստովանավայր (Աճառյան, Արմատական բառարան):

<sup>6</sup> Գ. Թագավորաց Զ. 23-35:

անունով կոչեց: Եվ հոգեկիր Եզեկիել մարգարեն, տեսիլը<sup>7</sup>, որ տեսավ մարգարեներից և պատգամախոսներից ոչ մեկի նման, այլ աստվածատես գրւշակումով ասաց. «Տերը ինձ դրեց մի շատ բարձր լերան վրա, ուր քաղաքի կառույցներ կային: Ինձ տարավ ներս և նրա մեջ տեսա մի տաճար, որի մեջ կար մի ահեղ և զարմանալի մարդ, որից փայլատակումներ էին ցայտում կարծես պղնձից, կանգնած էր դրան վրա և ձեռքում ուներ որմնադրի լար ու չափածող: Ինձ ասաց. Մարդու որդի, տե՛ս և հիշի՞ր այն ամենը, ինչ կա այստեղ, որովհետև քեզ ցույց տալու համար եկա»: Եվ տեսա Տաճարը շուրջանակի նկարված՝ ներսից և դրսից քերովքներ, արմավենիներ հատակից մինչև առաստաղ: Բայց ոչ միայն Տաճարն էր նկարված, այլև պատշաճաբներն ու դրները և Տիրոջ սեղանը: Քերովքները մարդակերպ էին, երկուս-երկուս և նրանց միջև արմավենի: (Այս բոլորը) նրա մեծ սքանչելիքների ապացույցն է»<sup>8</sup>:

Արդ, ինչ կասես սրա համար, ո՞վ մարդ, որ մտքով հիվանդ ես, որովհետև Մովսեսի և Սողոմոնի հորինածների և քերովքների համար ասացիր, որ ձեռազործ են. Իսկ սա ինչ կհամարես, որ Աստված ինքն է ցույց տվել: Ահա պարզ է, որ սկզբից պատկերները Աստվածության փառքի պատվի և երկրապագության սպասավորության համար էին: Այսքանը Հին Կտակարանից ասված:

Իսկ Նոր Կտակարանում Պողոսը ասում է աթենացիներին. «Շրջելով և տեսնելով ձեր պաշտամունքը, գտա մի բագին, որի վրա գրված էր «Անծանոթ Աստծուն»: Ում դուք առանց ձանաշելու եք պաշտում, ես ձեզ նույնն եմ քարոզում»<sup>9</sup>: Մի՞թե բագինը աստված էր. Բայց որովհետև հանուն աստծու էին պատվում, Պողոսն էլ նույնը վկայեց: Իսկ մենք ոչ թե ձշմարիտ Աստված ենք ձանաշում պատկերներն<sup>10</sup> ու նկարները, այլ աստծու անունով ենք նկարում, ինչպես երևեցավ մեզ. Եսային խոսում է նրա ծննդյան մասին, Երեմիան՝ մարդկանց մեջ շրջելու, Դավիթը՝ չարչարանքների ու թաղման, Եզեկիելն ու Ովսեեն՝ հարության, Դանիելն ու Զաքարիան՝ երկրորդ գալստյան, Նավումն ու Մարդիան՝ դատաստանի մասին: Եվ որովհետև նրանք նշաններով պատմեցին մեզ, (որոշ բաներ) եղան, (ուրիշներ) կկատարվեն: Իսկ մենք նկարում ենք այն, ինչ գրված է գրքերում, որովհետև գիրքն էլ դեղ է ինչպես պատկերների նյութը:

Եկեղեցու վարդապետներն էլ խոսում են պատկերների մասին: Ինչպես Հովհաննես Կ. Պոլսի եպիսկոպոսը՝ այն ձառում, ուր խոսում է լուսավորյալներին<sup>11</sup>, մի փոքր առաջ գնալով ասում է. «Օրինակ, թագավորական պղնձյա արձանները անշունչ են և անզգա, բայց նրանց ապավինող մարդիկ փրկվում են, ոչ թե պղինձն է (փրկում), այլ որովհետև թագավորինն է»: Եվ դու, հերետիկոս, այսպես իմացիր: Եվ դարձյալ այն ձառում, ուր ասում է «Դեսր չէ զանց առնել աստվածային Գիրքը», շարունակում է. «Չե՞ք տեսնում թագավորական նկարների վրա, որ վերևում պատկերն է, ուր թագավորը ստորագրել է, իսկ ներքենում, խարիսխի վրա գրված են թագավորի պատերազմները, հաղթանակներն ու կյանքի դեպքերը: Նույնպես և գրքերի վրա կարելի է տեսնել թագավորի պատկերը, իսկ վերևում և ներքենում բոլոր քաջություններն ու հաղթանակները»:

<sup>7</sup> Ա ձեռազիրը ունի լուսանցքում. Եզեկիել Խ. 2:

<sup>8</sup> Եզեկիել Խ. 2-4 և ԽԱ. 18-20:

<sup>9</sup> Գործք Առաքելոց ԾԷ. 23:

<sup>10</sup> Հավանաբար ունի որմնանկար իմաստը:

<sup>11</sup> Նկատի ունի նոր մկրտված քրիստոնյաներին:

Կամ ինչ կասես արդյոք Տիրոջ այն նկարի մասին, որ Աբգար թագավորի հավատարիմ՝ Անանը նկարեց Քրիստոսի դեմ հանդիման իսկ տեսնելով, որ այժմ մնում է, ասում են, Ուրիայի եկեղեցում:

Սևերիանոս եպիսկոպոսը ասում է. «Օրինակ, երբ թագավորը բացակա է, նրա պատկերն է գրավում տեղը և իշխանները երկրպագում են նրան, ամսվա տոները կատարում: Պետերն ու ռամիկները երկրպագում են ոչ թե տախտակին նայելով, այլ թագավորի պատկերին, ոչ թե նյութին են նայում, այլ զրով այնտեղ դրոշմվածին: Իսկ եթե մահկանացու թագավորի պատկերը այդքան է մեծարվում, որքա՞ն ավելի պետք է մեծարվի անմահ թագավորի կերպարանքն ու պատկերը»: Լսի՛ր, ինչ որ ասում են, որովհետև սրանք ել եկեղեցու վարդապետներ էին, որոնց գրքերն ել, եթե ուզենաս կարդալ, նույնը կպատմեն: Այսպես. Հայոց սուրբ Գրիգոր Լուսավորիչը ասում է իր աղոթքներում. «Փորագրված փայտերի փոխարեն իր խաչը կանգնեցրեց տիեզերքում, և որովհետև մարդիկ սովոր էին երկրպագել մահացածների պատկերներին, Ինքը մեռածի պատկեր դարձավ խաչի վրա: Մեռավ և անշնչացավ, որպեսզի հաստատեն խաչափայտին երկրպագելը, նրա վրա գտնվող պատկերին կամ մարդադեմքին, որպեսզի պատկերագործին, պատկերասերներին և պատկերապաշտներին իր աստվածության պատկերին հնագանդեցնի»<sup>12</sup>:

Իսկ եթե մեր խոսքերին չեք հավատում, պետք է գրքերը քննել և վերահասու լինել. Սակայն դուք գրքերից այնքան հեռու եք, որքան երկինքը երկրից: Բազմաթիվ այլ վկայություններ կան Ս. Գրքից: Ամեն ինչ տեսանելի է նրանց, ովքեր միտք ունեն: Ականջները լսում են և մտքերը ըմբռնում. Առանց մտքի աչքերին՝ մարմնի աչքերը կույր են: Բայց զարմանալին այն է, որ պատգամը ընդունում եք, իսկ իշխանին հալածում, նշանին երկրպագում եք, իսկ թագավորին քարկոծում, խաչը պատվում եք ու Խաչալին թշնամանում: Այսպես. Մանիքեականներն ու մարկիոնականները առ աչոք են համարում Փրկչի ճշմարտապես մարմնանալը, բայց երբ տեսնում են պատկերները, սաստիկ զայրացած, դժկամակում են և մոտենալով թշնամանում: Եթե մենք մարզարեներին չենք տեսել ու քննել, որ նրանք կոռապաշտության համար էին ասում, թե հեթանոսների կուտքերը դեմք են<sup>13</sup>, սակայն ոչ մի տեղ գրված չենք գտնում, որ ասեն, թե եկեղեցու կամ քրիստոնյաների պատկերները դեմք են, այլ՝ մարզարեները կուտքերին էին դատապարտում: Եկեղեցական պատմության մեջ էլ նույնն է ասվում, ինչպես Եվսեբիոս Ժամանակագիրը հաստատում է 7-րդ գլուխ 17-րդ դպրության մեջ, ուր խոսում է Փրկչի մեծամեծ գործերի հրաշալի նշանների մասին, որոնք կատարվեցին Պեննադա քաղաքում: «Բայց որովհետև այս քաղաքը հիշեցինք – ավելացնում է – չարժե զանց առնել սրա պատմությունը (որովհետև հիշվելու արժանի է նրանց կողմից, որոնք պիտի զան մեզնից հետո) տեղատես կնոջ մասին, որի արյան բղխումը հոսում էր, ինչպես ուսանում ենք սուրբ Ավետարանից, և բժշկվեց իր այդ ցավերից մեր Փրկչի կողմից այն քաղաքում, որտեղ, ասում են, ապրում էր նա: Եվ նրա տունը հայտնի է այդ քաղաքում իբրև գրավական Աստծու հրաշքների, նշան՝ այն ողորմության շնորհներին, որ կատարվեցին կնոջ վրա: Նրա տան դռների առաջ մի քարձր քարի վրա կա պղնձյա քանդակը ծունկի իջած կնոջ, որը ձեռքերը առաջ մեկնած աղաջում է նրա նման: Դրա դիմաց կա տղամարդու պղնձակերտ արձան, որ կանգնած է, մեկնոց ունի զցած, ձեռքը կարկառել է դեպի կինը: Իսկ սրա ուտքերի կողմից, զգեստից քարձր, մի բուսարմատ է աձել, որ իր տեսքով տարբեր է բոլոր արմատներից ու քարձրանում է մինչև գոտկատեղը. Սա դեղ է բոլոր ցավերին:

<sup>12</sup> Ազարթանգեղոս, «Հայոց պատմություն», Վենետիկ, 1930, էջ 67-68:

<sup>13</sup> Հիշեցնում է 96-րդ Սաղմոսի 5-րդ համարը:

Այս արձանը մեր Փրկչի նմանությունն է, ինչպես ասում են, և կանգուն է մինչև մեր օրերը. Մենք էլ այն տեսանք մեր աշքերով, եթե զնացինք այդ քաղաքք»: Բայց սա ոչնչով մեծ չէ, քան այն, որ հեթանոսներից մարդիկ հավատացին Քրիստոսին և դեռով նկարեցին Պողոսին, Պետրոսին և նույնիսկ իրեն՝ Քրիստոսին, և մնում է մինչև այսօր:

Արդ չե՞ք տեսել այդ գրքերը, ով ընկեր, որ հակառակ եք Աստծու պատվիրաններին: Ընկեր եմ ասում ոչ թե հավատքի ուղղափառության համար, այլ այն բանի համար, որ լսվեց մեր Հիսու Քրիստոսից, թե «Ընկեր, ինչի համար եկար»: Որովհետև եթե ընթերցել եք ու չգիտեք, ապա ձեզ համար ասված կիխի առաքյալի խոսքը, որ ասում է. «Աստված կուրացրեց այս աշխարհի անհավատների միտքը, որպեսզի նրանց մեջ չծագի Քրիստոսի փառքի Ավետարանի լույսը»<sup>14</sup>, և այլ բաներ: Իսկ եթե չեք կարդացել, պետք է փնտրել, քննել ու իմանալ բարին ու չարը, տարբերել աստվածայինն ու դիվականը:

Եվ ինչու չգիտեք, որ կուրքերի մեհյաններում քանդակված է Որմիզդը՝ Արամազդը, և իր պոռնկություններն ու կախարդությունները, իսկ Աստծու եկեղեցիներում նկարված ենք տեսնում սուրբ Կույս Աստվածածնին՝ իր գրկի մեջ ունենալով Քրիստոսին, որպես և՛ իր արարիչը, և՛ իր որդին, և՛ բոլորի ստեղծիչը: Կուրքերի մեհյաններում Անահիտն է իր պղծություններով ու պատրանքներով: Իսկ քրիստոնյաների եկեղեցիներում և Աստծու վկաների հարկերում նկարված ենք տեսնում ս. Գրիգորին իր աստվածահաճո շարչարանքներով ու սուրբ առաքինություններով, ս. Ստեփաննոս Նախավկային՝ իրեն քարկոծողների մեջ, երանելի և սուրբ կանանց՝ Գայանեին և Հռիփսիմեին իրենց հաղթական նահատակությամբ և սուրբ ընկերներով, ուրիշ առաքիների, պատվականների և հրեշտակակրոնների, որ չենք կարող թվել այստեղ: Կուրքերի մեհյաններում կան Աստղիկն ու Ափրոդիտեն, որին ցանկությունների մայր են անվանում բոլոր հեթանոսները, նրանց արբեցությունն ու անառակությունները, իսկ Աստծու եկեղեցիներում՝ տերունական խաչը և առաքյալների ու մարգարեների խաչակիր գնդերը, որոնք վերացրին ամբողջ կոռապաշտությունը մեջտեղից և տիեզերքը բերին դեպի աստվածապաշտություն՝ ամաչացնելով սատանային և իր զորքերին: Աստծու եկեղեցիներում նկարված ենք տեսնում Քրիստոսի (կատարած) բոլոր սքանչելագործությունները, ինչպես Գրքերում է գրված, ինչ որ նախապես ասացինք, թե մարգարեները մեզ գուշակեցին ծնունդը, մկրտությունը, շարչարանքները, խաչելությունը, թաղումը, հարությունը և երկինք համբառնալը: Եկեղեցիներում նկարում են այս բոլորը, ինչ որ սուրբ Գիրքն է պատմում: Դեղով չե՞ն գրված գրքերը. Նոյն բանն էլ դեղով նկարված է եկեղեցիներում: Գրքերից միայն ականջներն են լսում, իսկ նկարները աշքով են տեսնում, ականջները՝ լսում և սրտով հավատում: Ահա պարզ է, որ Գրքերից շեղում չէ պատկերների պաշտամունքը: Եթե որևէ մեկը (խորը) քննի, ձշմարտության կհասնի, իսկ հերետիկոսները սխալվում են հակածառելով. «Նրա համար ենք խոտան համարում (նկարները), որովհետև անխոս են և անշունչ»: Բայց մի՞ թե Աստծու տապանակը խոսում էր, եթե բերանսիվայր կործանեց Դագովնը, Ազովտան, Գեթը, և այլազգիների քաղաք Ասկողովնան այնքան հարվածեց, մինչև որ ասկողովնացիք բողոքեցին ասելով. «Ինչու Խրայելի Աստծու տապանակը (վերա)դարձակ մեզ սպանելու համար, մեզ և մեր ժողովրդին»<sup>15</sup>: Միթե Քրիստոսի խաչը, որ հրեշտակների պարձանքն է, մարդկանց փրկությունը և դսերի սարսափը, խոսեց, եթե քաղաքում կենդանացրեց մեռյալներին և մինչև մեր օրերը կատարել է բազմաթիվ հրաշագործություններ:

<sup>14</sup> Բ Կորնթացոց Դ. 4:

<sup>15</sup> Ա. Թագավորաց Ե. 10:

Ահա նոր պատվիրանները շարվում են հների ետևից և մեզ պատմում Քրիստոսի շնորհի մասին: Ավետարանի տուփերն ել նկարված ենք տեսնում, ոչ միայն ոսկուց ու արծաթից պատրաստված, այլև փղերի ոսկորներից ու կարմիր կաշուց: Իսկ մենք, երբ երկրպագում ենք սուրբ Ավետարանին կամ համբուրում, ոչ թե փղի ոսկորներին ենք երկրպագություն մատուցում կամ լայքային<sup>16</sup>, որ բարբարոսների երկրից է վաճառքի բերվում, այլ Փրկչի խոսքին, որ գրված է մազաղաթի վրա: Ճիշտ նույնպես, երբ Փառաց Տերը ավանակի վրա նստած մոտեցավ քաղաքին, նրան ընդառաջ ելան ծերերն ու մանուկները ձիթենու և արմավենու ոստերով. Օրինում էին, գովարանում և երկրպագում: Ոչ թե էջին էին երկրպագում, այլ Քրիստոսին՝ Աստծու Որդուն, որ նրա վրա էր նստած: Այսպես ել պատկերներին երկրպագելը ոչ թե դեղերի համար է, այլ Քրիստոսի համար, որի անունով նկարված են: Արդ, աստվածային պատկերների նմանությունը ինչ է հեթանոսների պղծության հետ, որի համար հերետիկուները բժեր են կարկատում և հերձված մտցնում անձերի և բոլոր լսողների կորստի համար: Իրենց բոլոր կամակիցներով ու գործակիցներով վրեժ պիտի գտնեն տանջանքների դժոխքում: Այսպիսիների մասին դիպուկ է ասել Ովսեն երջանիկ մարգարեն. «Գայթակղության որոգայթները նրանց ձանապարհին են, որովհետև մոլություն տնկեցին Աստծու տան մեջ»<sup>17</sup>, իսկ մի այլ տեղ՝ «Վայ նրան, ով ընկերոջը զգլսում է պղտոր հրապույրներով»<sup>18</sup>: Եվ իսկապես. Մեղքերի հրապույրներով ու որոգայթներով են պատված նրանք, որոնք տատանվում են ուղիղ հավատի մեջ և շեղվում տապալվում ուղիղ խորհրդից: Բայց կխոսեմ և չեմ լրի: Օրինակ, եթե մեկը որևէ գիրք որոնի արկղներում և ասի՝ առաքյալը տուր կամ Եսային կամ Երեմիան, մի՞ թե Եսայուն է խնդրում կամ առաքյալին, թե նրանց զրքերում գտնվող աստվածային պատգամներն ու խոսքերը: Իսկ մենք պատկերներով հիշում ենք նրանց և նրանց առաքողների, և չենք ասում, թե սա (նկարը) Աստված է, այլ Աստծու և նրա ծառաների հիշեցնողը:

Իսկ որ գրված է, թե Պապը եկեղեցի մտցրեց նկարները<sup>19</sup>, բոլորին հայտնի է, որ սուս եք խոսում, որովհետև Հայաստանում ոչ ոք նկարել չգիտեր մինչև հիմա, այլ հոռոմներից (հույներից) էին բերում, ինչպես մեր ուսումն էր այնտեղից, երբ դեռ նրանք չէին մոլորվել: Եվ Պապից առաջ ուրիշ թագավորներ կային, որոնք պատկերներ ու նկարներ էին դնում եկեղեցում Քրիստոսի անունով, և Պապից հետո ուրիշ թագավորներ եղան Հայաստանում և հայրապետներ՝ ինչպես երանելի ս. Սահակն ու Մաշտոցը, Եզնիկը, Արձանը, Կորյունը և նրանց ընկերները, որոնց միջոցով իսկ Աստված դպրություն շնորհեց հայերին:

Բայց նրանցից ոչ մեկը եկեղեցու պատկերների ու նկարների դեմ որևէ բան չգրեց, այլ միայն Շմուլը, Թաղեռն ու Եսային և նրանց ընկերները, որոնք շատերին իրենց հետ շեղեցին (ուղիղ ձանապարհից) ինչպես և ձեզ: Թեև ժամանակավորապես հերձվածողների կողմը փայլում է, սակայն, անմիջապես խամրում է, որովհետև սուս են խոսում, իսկ առաջին մեղքերը ստելուց ծնվեցին, ինչպես Աղամի մոտ: Այս խոսքերից իմը չեն, այլ Սուրբ Գրքերինը՝ Հին և Նոր

<sup>16</sup> Մալխասյան բառարան - «Ուետնային կես թափանցիկ հյութ, որ կաթի պես ծորում է ծառերից»:

<sup>17</sup> Ովսեն թ. 8:

<sup>18</sup> Ամբակում թ. 15:

<sup>19</sup> Հավանաբար պատկերամարտները գործածել են Փ. Բյուզանդի հետյալ խոսքերը. «Նրա (Ներսեսի) այս աշխարհից գնալուց հետո, շատ մարդիկ դարձան նախկին կոռապաշտության. Հայաստանի շատ տեղերում կուրքեր կանգնեցրին Պապ թագավորի թույլտվությամբ, որովհետև չկար մեկը, որ հանդիմաներ, չկար մեկը, որից քաշվեին, այլ ամեն մարդ համարձակ գործում էր, ինչ որ կամենում էր. շատ արձաններ էին կանգնեցրել և նրանց երկրպագում էին» (Փ. Բյուզանդ, Երևան, 1968, էջ 269-270):

Կտակարաններինը: Եթե ուզում եք Քրիստոսին ծառայել ու սիրել նրա պատվիրանները, նույն գրքերը, որոնց անունը այստեղ գրված է, որոնեցեք, և երբ գտնեք, նրանք ձեզ Աստծու ճշմարիտ ճանապարհը ցույց կտան:

Նկարների մասին այսքանն էլ բավական է նրանց, ովքեր խելք ունեն:

Իսկ դեղերի մասին, որ ասում են, թե պիղծ են, հանդիմանվում են իրենց իսկ բերանով, որովհետև գրքերի դեղն է արջասպ, գտոր և կոփ, որ կարելի է ուտել նույնիսկ, իսկ պատկերների նյութն է կաթ, ձու, զառիկ, լածվարդ, ժանգառ, բուռ, կիր և այլ բաներ, որոնց մի մասը կարելի է ուտել որպես կերակոր, կամ բժշկման համար գործածել: Բայց պիղծ չենք համարում այն, որ Աստված տվեց երկրի վայելչության համար, և իբրև զարդելի բան չենք արհամարհում, երբ ասում եք, թե հոտ է զալիս դեղերից: Իսկ եթե այդքան անաղտ եք և հոգևոր, պետք է աղոթքի ժամին պատռեք ձեր որովայնները, եռացրած ջրով լվաք ձեր աղիքները և հետո միայն մտնեք եկեղեցի, ո՞վ չար և անշափ չարեր, ուր մերթ դեղերն եք պատճառ բռնում և մերթ՝ պատկերներն ու նկարները, և ասում եք, որ ձեռագործ են ու մեզ ոչ արժանի նաև: Եկեղեցիներն են ձեռագործ և կոչվում են Աստծու Տաճար, ինչպես Պողոսն էր ասում Տիմոթեոսին. «Որպեսզի իմանաս, ասում է, որ ինչպես պետք է քեզ շրջել Աստծու տանը, որ կենդանի Աստծու եկեղեցին է, ճշմարտության սյունն ու հաստատությունը»<sup>20</sup>: Արդ ինչ կասեք (այս մասին), որովհետև սա էլ (Տաճարը) ձեռագործ է, իսկ այդ հայտնիի միջոցով աներևույթն ենք ճանաչում. Դեղերն ու նկարները Աստծու և նրա ծառաների հիշեցնողն են: Բայց որովհետև դուք սատանայով եք տարված և ձեր անձերը սուրբ են համարում, նման եք սպիտակացրած գերեզմանների: Ուստի ձիշտ է ասել առակողը. «Շատ արդար մի լինիր և մի ճամարտակիր, որպեսզի չսխալվես»<sup>21</sup>: Դարձյալ ասում է. «Չար ծնունդը արդարների մոտ է փնտրում իր անձը»<sup>22</sup>, ինչպես և դուք բարձրա(մտ)ելով գոռողանում եք և անդուռ բերանով շատախոսում այն, ինչ պետք չէ:

Իսկ մենք կշտապենք մտնել Քրիստոսի եկեղեցի գիշեր ու ցերեկ կանխա(պես) աղոթելով, որպեսզի ավարտենք այս պանդխտության ժամանակը և արժանի լինենք դատաստանի օրը զվարթագին դեմքով տեսնելու Աստծոն, որպեսզի կարողանանք հասնել հավիտենական բարիին, քանի որ Նրանն է փառքը հավիտյանս հավիտենից. Ամեն»:

### **Գրաբարից փոխադրումը՝ Երվանդ Մելքոնյանի**

**«Էջմիածին» ամսագիր, 1970, Զ-Է, էջ 93-97:**

Նյութը ներկայացրել է Հուսինե Թումանյանը

<sup>20</sup> Ա. Տիմոթեոս Գ. 15:

<sup>21</sup> Ժողովող Է. 17:

<sup>22</sup> Առակաց Լ. 12: